

Հայտարարություն

Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացվող «Նախադպրոցական և տարական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կրթական հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակման նպատակով խորհրդատվական ծառայության գնման նպատակով խորհրդատուի ընտրության մրցույթի

<<24>> մարտի 2017թ.

Իսաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, այսուհետ՝ ՀՊՄՀ, «Կրթությանբարելավում» վարկայինծրագրիշրջանակներում իրականացվող «Հայաստանի բարձրագույն կրթության նորարարությունների մրցակցային հիմնադրամի» միջոցներից իրականացնում է «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի նպատակը ՀՊՄՀ-ում ժամանակակից կրթական մարտահրավերներին համապատասխան նորարարական գործնական ու հետազոտական հմտություններով և կարողություններով հարուստ մասնագետների պատրաստումն է նախադպրոցական և տարրական կրթության ոլորտում:

Ծրագրի շրջանակներում ստեղծվելու են հետազոտական և մուլտիմեդիոն լաբորատորիա և լսարաններ, որոնք հագեցած կլինեն համապատասխան սարքավորումներով և էլեկտրոնային ծրագրերով: Մասնավորապես լաբորատորիայի գործարկման համար նախատեսվում է էլեկտրոնային պլատֆորմի և ուսումնասօժանդակ ռեսուրսների ստեղծման նպատակով հարմարեցված համակարգչային ծրագրի մշակում: Էլեկտրոնային հարթակի ստեղծման համար անհրաժեշտ է իրականացնել հարթակի տեխնիկական բնութագրի մշակում՝ հիմք ընդունելով օգտատերերի կարիքների գնահատման արդյունքները և օտարերկրյա փորձը՝ տեխնիկական բնութագրի տեսանկյունից: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 1 անհատ խորհրդատուի ընտրություն: Խորհրդատուն աշխատանքները կիրականացնի երկու ամսվա ընթացքում երկու փուլով՝ 1 ամիս = 1 փուլ:

Անհատ խորհրդատուի կողմից իրականացվելիք գործողությունների շրջանակը հետևյալն է.

Ծառայությունների մատուցումը նախատեսվում է իրականացնել 1 անհատ խորհրդատուի ներգրավմամբ, ով հաշվետու ժամանակահատվածում կիրականացնի էլեկտրոնային հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակումը՝ հիմք ընդունելով ծրագրի շրջանակներում ներգրավված այլ փորձագետի կատարած ուսումնասիրությունները կրթական հարթակի օգտատերերի կրթական կարիքների գնահատման նպատակով, ինչպես նաև օտարերկրյա փորձի ուսումնասիրության արդյունքները: Բացի այդ, փորձագետը հավելյալ կուսումնասիրի նմանատիպ հարթակների ազգային փորձը՝ տեխնիկական առաջադրանքի ամբողջականացման և տեղական կարիքներին համապատասխանեցման նպատակով: Անհատ խորհրդատուի կողմից իրականացվելիք գործողությունների նվազագույն շրջանակը հետևյալն է.

- Կուսումնասիրի էլեկտրոնային հարթակի օգտատերերի կարիքների գնահատման արդյունքները
- Կուսումնասիրի օտարերկրյա փորձը էլեկտրոնային կրթական հարթակի վերաբերյալ՝ տեխնիկական տեսանկյունից,
- Կպատրաստի էլեկտրոնային հարթակի տեխնիկական բնութագիրը ներառելով.
 - o Հարթակի նպատակները, նշանակությունը, հիմնական բաղադրիչները և ֆունկցիոնալության նկարագրությունը,
 - o Հարթակի աշխատանքային օպերացիոն համակարգը,
 - o Դիզայնը
 - o Հարթակի ներքին բաղադրիչների ֆունկցիոնալությունը
 - o Հարթակում տեղակայվող նյութերի համար նախատեսվող ծավալները,
 - o Հարթակի օգտատերերի մակարդակները,
 - o Առցանց համակարգում աշխատելու հնարավորությունները (ինտերնետ կապի նվազագույն պահանջները, բրաուզերը, սինխրոնիզացիան և այլն)
 - o Անվտանգության համակարգը,
 - o Սարքավորումների նվազագույն պահանջները, որոնց վրա աշխատելու է հարթակը և արագագործությունը (RAM, CPU, storage, GPU և այլն)

Ակնկալվող արդյունքները

Ծառայության մատուցման արդյունքում խորհրդատուն պետք է ներկայացնի էլեկտրոնային հարթակի տեխնիկական բնութագիրը ներառյալ՝

- o Հարթակի նպատակները, նշանակությունը, հիմնական բաղադրիչները և ֆունկցիոնալության նկարագրությունը,
- o Հարթակի աշխատանքային օպերացիոն համակարգը,
- o Դիզայնը, կառուցվածքը և նավիգացիան,
- o Ստատիստիկայի հավաքագրման հնարավոր համակարգը,
- o Հարթակի տվյալների շտեմարանի նկարագրությունը և ծավալները,
- o Հնարավոր օգտատերերի միառժամանակյա օգտագործման քանակները,
- o Սերվերի կոնֆիգուրացիան,
- o Հարթակի օգտատերերի մակարդակները,
- o Առցանց համակարգում աշխատելու հնարավորությունները (ինտերնետ կապի նվազագույն պահանջները, բրաուզերը)
- o Սարքավորումների նվազագույն պահանջները, որոնց վրա աշխատելու է հարթակը և արագագործությունը (RAM, CPU, storage, GPU և այլն)

Նվազագույն որակավորման պահանջներն են.

Նշված ծառայության իրականացման համար պահանջվում են անհատ խորհրդատուին ներկայացվող նվազագույն որակավորման պահանջներն ու գնահատման չափանիշները.

- Բարձրագույն կրթություն SՀS և ինֆորմատիկայի մասնագիտական ոլորտներում,

- Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ բարձրագույն կրթության ոլորտին առնչվող հաստատություններում, ծրագրերում,
- Նմանանատիպ աշխատանքների իրականացման նախկին փորձառություն,
- Օտար լեզվի (անգլերեն կամ ռուսերեն) իմացությունը առավելություն է

Գնահատման չափանիշներ

Խորհրդատուի ընտրությունը իրականացվելու է Ընտրության հանձնաժողովի կողմից ըստ հետևյալ գնահատման չափանիշների.

Չափանիշը	Առավելագույն միավորը
Որակավորում՝ <ul style="list-style-type: none"> - Բարձրագույն կրթություն SՀS և ինֆորմատիկայի մասնագիտական ոլորտներում - Օտար լեզվի (անգլերեն կամ ռուսերեն) իմացությունը որպես առավելություն 	30
Ընդհանուր փորձառություն և հմտություններ՝ <ul style="list-style-type: none"> - Առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ բարձրագույն կրթության ոլորտին առնչվող հաստատություններում, ծրագրերում 	30
Հատուկ փորձառություն՝ <ul style="list-style-type: none"> - Նմանանատիպ աշխատանքների իրականացման նախկին փորձառություն 	40

Դիմող թեկնածուները դիմումին կից (դիմումի ձևը կցվում է) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը, աշխատանքների ցանկը:
- Կրթությունը հիմնավորող փաստաթղթեր:

Ամբողջ ծրագիրը պետք է իրականացնել 2 ամսվա ընթացքում՝ հունիս և հուլիս ամիսներին՝ երկու փուլով:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել աշխատանքային օրերին Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրամ՝ ք. Երևան, Տիգրան Մեծի 17, 214 սենյակ հասցեով, կամ էլ. փոստով (davidmeliqsetyan@mail.ru) մինչև ս.թ. ապրիլի <<3-ը>>, ժամը 17:00-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ 010-597082 հեռախոսահամարով:

Դիմող՝ (անուն ազգանուն)
հասցե՝(.....)
հեռախոս՝ (.....)
Էլ. փոստ՝ (.....)

Դիմում

Սույնով ցանկություն եմ հայտնում մասնակցել «Նախադպրոցական և տարական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շրջանակներում էլեկտրոնային կրթական հարթակի տեխնիկական առաջադրանքի մշակման նպատակով խորհրդատուների ընտրության մրցույթին:

Կից ներկայացնում եմ տվյալներ իմ աշխատանքային փորձի և կրթության մասին:

Դիմող՝ (անուն, ազգանուն)

<<...>> 2017թ.